«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Եվրոպական համալսարանի
ռեկտոր Հ. Բլեյանյան
«02» սեպտեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լուսինե Սամվելի Համբարձումյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Քննարկմանը մասնակցում էին ՀԵՀ տնտեսագիտության և ֆիանասների, կառավարման ամբիոնների դասախոսները՝ տնտ.թ., դոցենտ Ն. Կիրակոսյանը, տնտ.դ., պրոֆեսոր Գ. Վահանյանը, տնտ.դ., պրոֆեսոր Ա. Ճուղուրյան, տնտ.դ., պրոֆեսոր Թ. Մանասերյանը, տնտ.դ., պրոֆեսոր Ս. Գևորգյանը, տնտ.թ., դոցենտ Մ. Ավագյանը, տնտ.թ. Լ. Սարգսյանը, տնտ.թ., դոցենտ Ա. Մխիթարյանը, տնտ.թ., դոցենտ Գ. Գրիգորյանը, տնտ.թ., դոցենտ Հ. Գրիգորյանը, տնտ.թ., դոցենտ Հ. Երիցյանը, տնտ.թ. Կ. Սարգսյանը, տնտ.թ. Ն. Գրիգորյանը, տնտ.թ. Զ. Հարոյանը, տնտ.թ. Ա. Հանիսյանը, Գ. Ավետիսյանը, Մ. Մանուչարյանը, Ա. Նազուրյանը, Ն. Անանյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մասնավոր կենսաթոշակային համակարգերի ներդրումը երկրներում իր հետ նոր հիմնախնդիրներ է առաջ բերում, որից զերծ չմնաց նաև Հայաստանի Հանրապետությունը: Արժեթղթերի շուկայում ֆինանսական գործիքների և ներդրումային ոլորտների սահմանափակության պայմաններում ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի համար իրական հիմնախնդիրներ են ակտիվների տեղաբաշխման և ակտիվների օպտիմալ կառուցվածքի սահմանման

հարցերը: Բացի այդ, վստահության պակասով, ֆինանսական գրագիտության ոչ բավարար մակարդակով և այլ գործոններով պայմանավորված ՀՀ-ում նկատվում է էական անտարբերություն մասնավոր կենսաթոշակային համակարգի մասնակիցների կողմից: Մյուս կողմից էլ, սակայն, կատարված բարեփոխումների արդյունքում մեծացել է համակարգի մասնակիցների պատասխանատվությունը՝ սեփական ներդրումային նախընտրություններին համապատասխան ֆոնդ, ինչպես նաև դրա կառավարչին ընտրելու և այլ առումներով: Ուստի ոլորտը կարգավորող կառույցների և կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու այն գործոնները, որոնք պայմանավորում են նման վարքը, և կատարելու համապատասխան քայլեր այդ վարքագծի փոփոխման՝ համակարգի մասնակիցների ներգրավվածության մեծացման ուղղությամբ: Գիտական շրջանակներում մեծապես քննարկվում է ֆինանսական գրագիտության դերը այս հարցում: Որոշ հեղինակներ անդրադարձել են վստահության և ֆինասնական ներգրավվածության ազդեցության բացահայտմանը, սակայն վերջինիս գծով ընդգրկուն և համակողմանի վերլուծությունների անհրաժեշտություն կա:

Լուսինե Համբարձումյանի ատենախոսությունը նվիրված է այս հարցերի ուսումնասիրմանը և առկա հիմնախնդիրների վերհանմանը, ուստի ատենախոսության թեման արդիական և հրատապ է:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական ներգրավվածության ազդեցությունը և առաջարկել այդ ազդեցության քանակական գնահատման մոտեցումներ: Նշված նպատակի իրագործման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- բացահայտել ՀՀ-ում բարեփոխված կենսաթոշակային համակարգի առանձնահատկությունները և լուծում պահանջող խնդիրները,
- ուսումնասիրել ֆինանսական ներգրավվածության տնտեսական բովանդակությունը և ֆինանսական գրագիտության հետ դրա փոխկապվածության դրսևորումները,

- վերլուծել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական գրագիտության, ինստիտուտների նկատմամբ վստահության, ֆինանսական ներգրավվածության և այլ գործոնների ազդեցության մոտեցումները,
- ուսումնասիրել ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքի հետ կապված հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ միջազգային փորձը,
- վերլուծել ֆինանսական ներգրավվածության դինամիկան ՀՀ-ում և բացահայտել դրա ընդլայմանը խոչընդոտող գործոնները,
- բացահայտել ՀՀ պարտադիր կենսաթոշակային համակարգի մասնակիցների՝ կենսաթոշակային ֆոնդի ընտրության և կուտակային կենսաթոշակային հաշվի մնացորդը հսկելու հետ կապված վարքագծի պատճառները,
- ուսումնասիրել «կյանքի ցիկլի» մոդելը՝ որպես ՀՀ կենսաթոշակային համակարգի կատարելագործման ուղի, և գնահատել դրա կիրառման դեպքում սպասվող օգուտները և խնդիրները,
- գնահատել ֆինանսական ներգրավվածության և այլ հնարավոր ազդող գործոնների ազդեցության չափերը կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների մասնակցության վրա,
- առաջարկել ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության ընդլայնման հավանական ուղիներ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության **ներածությունում** հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գործնական նշանակությունը, ստացված հիմնական արդյունքներն ու գիտական նորույթները, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության գնահատման տեսամեթոդական հիմքերը և ժամանակակից դրսևորումները»** գլխում հեղինակը ուսումնասիրել է ՀՀ կենսաթոշակային համակարգերը, դրա առանձնահատկությունները, միջազգային փորձը և առկա

հիմնախնդիրները: Հեղինակի կողմից ներկայացվել է ֆինանսական ներգրավվածության տնտեսական բովանդակությանը, դրա կարևորությունը, ինչպես նաև ներկայացրել գիտական շրջանակներում առկա մոտեցումները՝ կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ազդող գործոնների, այդ թվում՝ ֆինանսական ներգրավվածության վերաբերյալ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության վերլուծությունը ՀՀ-ում»** գլուխը նվիրված է ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների տեղաբաշխման հիմնախնդիրներին և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկություններին, ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության դինամիկայի վերլուծությանը, ինչպես նաև ՀՀ կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների վարքագծի վրա ազդող գործոնների բացահայտմանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխկապակցվածության գնահատման կատարելագործման ուղիները» գլխում** հեղինակի կողմից վերլուծվել և ներկայացվել են կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների ներգրավվածության վրա ֆինանսական ներգրավվածության գնահատելու մոտեցում, ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարման բարելավման և ֆինանսական ներգրավվածության ընդլայնման ուղիներ:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են հիմնական եզրակացությունները և բարձրացված հիմնախնդիրների լուծման մոտեցումները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը: Որպես հետազոտության ուսումնասիրության օբյեկտը հեղինակի կողմից ընտրված է ՀՀ-ում բարեփոխված կենսաթոշակային համակարգը: Հետազոտության առարկան ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավածության գնահատման հիմնախնդիրներն են:

Հետազոտության տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտի վերաբերյալ տարբեր հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները, միջազգային հեղինակավոր

փորձագետների և կազմակերպությունների հետազոտությունները ու հոդվածները, ինչպես նաև ՀՀ օրենսդրական և իրավական այլ ակտերի դրույթները:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ առաջարկված մոտեցումները և հիմնական արդյունքները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ-ում և նպաստել մասնավոր կենսաթոշակային համակարգի զարգացմանը, ինչպես նաև երկրում ֆինանսական ներգրավվածության խորացմանը:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ, հատկապես, կարևորվում են հետևյալները.

1. բացահայտվել են ՀՀ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կողմից կենսաթոշակային ֆոնդ չընտրելու հետ կապված չեզոք վարքագծի վրա ազդող գործոնները,

2. եկամտաբերության և ռիսկի գնահատման միջոցով հիմնավորվել է ՀՀ-ում գործող «կյանքի ռճի» մոդելի համեմատ «կյանքի ցիկլի» մոդելի ֆոնդերն ավտոմատ ընտրվող կենսաթոշակային ֆոնդ սահմանելու նպատակահարմարությունը,

3. հնարավոր ռիսկերի, միջազգային փորձի և տեղական շուկայի առանձնահատկությունների հաշվառումով մշակվել է ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ «կյանքի ռճի» գործող մոդելից «կյանքի ցիկլի» մոդելին աստիճանական անցման մոտեցում,

4. հիմնավորվել է կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգ ունեցող երկրներում կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության և ֆինանսական ներգրավվածության, ֆինանսական գրագիտության, ֆինանսական շուկաների զարգացվածության, գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետության միջև գոյություն ունեցող վիճակագրական նշանակալի կապը, և առաջարկվել են այդ կապերը գնահատող բազմագործոն ռեգրեսիոն մոդելներ,

5. բացահայտվել են ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության ավելի խորը ընդլայման վրա նեռբանկերի և չելենջըր բանկերի ազդեցության դրսևորման

ուղիները՝ շեշտադրելով դրանց ներդրման հետ կապված խնդիրները և առավելությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսության 1.2. ենթագլուխը վերնագրված է՝ «Ֆինանսական ներգրավվածության տնտեսական բովանդակությունը և ֆինանսական գրագիտության հետ փոխկապակցվածության դրսևորումները», 1.3. ենթագլուխը՝ «Կենսաթոշակային ֆոնդերի, ֆինանսական ներգրավվածության և ֆինանսական գրագիտության փոխազդեցության մոտեցումները», որոնցում ներկայացված ֆինանսական ներգրավվածության և ֆինանսական գրագիտության փոխկապակցվածության դրսևորումները և փոխազդեցության մոտեցումները հստակ չեն առանձնանում՝ 1-ին դեպքում որպես միմյանց հետ կապակցված կատեգորիաներ, 2-րդ դեպքում՝ միմյանց վրա փոխադարձ ներգործություն, ազդեցություն ունեցող կատեգորիաներ: Բացի դա, 1.3-ում ներկայացվել են տարբեր հեղինակներից մեջբերումներ, տարբեր հետազոտությունների արդյունքներ, որոնք ամփոփ չեն արտահայտում ատենախոսի դիրքորոշումը նշյալ դրսևորումների և մոտեցումների վերաբերյալ:
2. Աշխատանքում միջազգային փորձի վերլուծությունը թերի է: Աշխատանքի երկրորդ գլխում նախատեսված չէ միջազգային փորձի ուսումնասիրություն: Դատելով օգտագործված գրականության ցանկից, հեղինակը հիմնականում ուսումնասիրել է ֆինանսական ներգրավվածության վերաբերյալ միջազգային գրականություն, այն էլ՝ մեծ մասը օգտագործվել է աշխատանքի առաջին գլխի 2-րդ և 3-րդ ենթակետերում՝ ֆինանսական ներգրավվածության ուսումնասիրության տեսանկյունից, այլ ոչ թե ֆինանսական ներգրավվածության և կենսաթոշակային ֆոնդերի փոխկապվածության: Աշխատանքը էականորեն կշահեր, եթե իրականացված լիներ ընտրված թեմայի և առաջադրված խնդիրների վերաբերող միջազգային փորձի առավել խորը վերլուծություն:

3. 2.1.՝ «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքի վերլուծությունը և լուծում պահանջող խնդիրները», ենթագլխում իրականացվել է կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքի վերլուծություն, բացահայտվել են լուծում պահանջող որոշ խնդիրներ, կատարվել են ամփոփումներ առ այն, որ ՀՀ-ում օրենսդրական սահմանափակումների և տեղական շուկայի թերզարգացվածության պատճառով ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը ներդրված է տեղական անվանական երկարաժամկետ պետական պարտատոմսերում, ավանդներում, դրամական միջոցներում, դրանց համարժեքներում, ինչը անվտանգ չէ ներդրողի տեսանկյունից, քանի որ վերջինս կարող է բախվել գնաճի, տոկոսադրույքի և վերաներդման ռիսկերի հետ: Այդ իսկ պատճառով հետազոտությունում կարևորվել է ՀՀ-ում «գնաճին ինդեքսավորված երկարաժամկետ պարտատոմսերի» թողարկման հնարավորության ուսումնասիրումը՝ հաշվի առնելով ՀՀ կենսաթոշակային ակտիվների արագորեն աճող տեմպը և ՀՀ-ում ներդրումային սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև այն, որ դրանց թողարկումը ձեռնտու է նաև կառավարություններին: Մյուս ամփոփումը վերաբերում է նրան, որ ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի կողմից բաժնետոմսերում ներդրումներ կատարելու հնարավորությունը լիովին չի օգտագործվում՝ արտարժութային ներդրումների սահմանափակման, ինչպես նաև տեղական բաժնային շուկայի թերզարգացվածության պատճառով և միաժամանակ դիտարկվում է օրենսդրական սահմանափակումների վերանայման արդյունքում ֆոնդերի լրացուցիչ օգուտներ ստանալու գնահատման անհրաժեշտությունը: Բացի նշյալը, ամփոփվել է, որ այլընտրանքային ակտիվներից միայն մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդում ներդրում ունեն ՀՀ կենսաթոշակային ֆոնդերը: Մյուսների մասով տեղական շուկայում սակավ են գործիքները, օրենսդրական դաշտը թերի է և դրանց զարգացումը կարող է նպաստել ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքի բարելավմանը, ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիային, ռիսկերի հեջավորմանը, պորտֆելի կայուն դրամական հոսքերի ապահովմանը և այլն, ինչպես նաև նպաստել ՀՀ տնտեսական, բնապահպանական, սոցիալական,

ենթակառուցվածքային և այլ ոլորտների զարգացմանը: Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակի կողմից ընդգծված վերոնշյալ հիմնարար խնդիրներն ունենային առաջարկված համարժեք լուծումներ:

4. Աշխատանքի 2.2 ենթակետում ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության հիմնական վերլուծությունը իրականացվել է մինչև 2017թթ տվյալներով: Սակայն, վերջին տարիներին ՀՀ ֆինանսական շուկայում ֆինանսական գրագիտության և ներգրավվածության առումով նկատվել են էական փոփոխություններ՝ կապված տեխնոլոգիաների կիրառման, ՀՀ ԿԲ կողմից իրազեկման ծրագրերի իրականացմամբ և գլոբալ տենդենցներից ելնելով:

5. Ատենախոսը կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների վարքագծի վրա ազդող գործոնների ուսումնասիրման ընթացքում ներկայացրել է, որ ՀՀ-ում ֆինանսական գրագիտության մակարդակը բավականին ցածր է և ՀՀ կուտակային համակարգի մասնակցի չեզոք վարքագիծը կապել է ֆինանսական գրագիտության և ֆինանսական ներգրավվածության ցածր մակարդակի, եկամտի, կրթական մակարդակի, ֆինանսական խնդիրների առաջացման հաճախակիության հետ, որի հետ կապված հետազոտությունում իրականացվել է ուսումնասիրություն և հիմնավորվել, որ ՀՀ կենսաթոշակային համակարգի մասնակիցների չեզոք վարքագիծը կարող է փոխվել երկրում ֆինանսական գրագիտության բարձրացմամբ և ֆինանսական ներգրավվածության ընդլայնմամբ: Նույն համատեքստում հեղինակը նշում է, որ վերջիններս երկարաժամկետում ձեռքբերվող ցուցանիշներ են և միևնույն ժամանակ հաջորդ գլխում անդրադարձել է այդ խնդրի կարճաժամկետ լուծմանը: Ատենախոսության գիտական արժեքն ավելի կընդգծվեր, եթե հեղինակը դիտարկեր ձեռքբերված կարճաժամկետ արդյունքի տարածելիությունը երկարաժամկետում ձեռքբերվող արդյունքի նկատմամբ:

6. Ատենախոսությունն ավելի կշահեր, եթե 3.3՝ «ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության ընդլայնման հավանական ուղիները», ենթագլխում գիտական նորույթի 5-րդ կետի շրջանակում գնահատվեին նաև ատենախոսությունում ընտրված թիրախային խմբերի (գյուղական համայնքներ, աղքատ բնակչություն, ծերեր, ցածր եկամուտներ ունեցողներ, ֆինանսական

գրագիտության ցածր մակարդակ ունեցողներ) նորարարական, այդ թվում՝ ֆինանսական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորություններն ու դրանց նկատմամբ հասանելիությունը:

7. Ատենախոսության գիտական նորույթի 2-րդ և 3-րդ կետերը վերաբերում են ՀՀ-ում գործող «կյանքի ոճի» մոդելի համեմատ «կյանքի ցիկլի» մոդելի ֆոնդերն ավտոմատ ընտրվող կենսաթոշակային ֆոնդ սահմանելու նպատակահարմարությանն ու ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ «կյանքի ոճի» մոդելից «կյանքի ցիկլի» մոդելին աստիճանական անցման մոտեցման մշակմանը: Դրանք փոխլրացնում են միմյանց և միասնության մեջ կարելի էր ներկայացնել մեկ գիտական նորույթի տեսքով:

8. Ատենախոսության գլուխների և ենթակետերի վերջում կատարված եզրահանգումները և ամփոփումները ամբողջությամբ չեն ներկայացնում տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների կարևոր ձեռքբերումները:

9. Աշխատանքում կատարված եզրահանգումները և առաջարկությունները ունեն լրացուցիչ հիմնավորման կարիք: Եզրակացություններ և առաջարկություններ բաժնի 8-րդ կետում ներկայացված կյանքի ցիկլի մոդելին անցման առաջարկությունը ունի լրացուցիչ հիմնավորումների կարիք: Նախ, գլոբալ տնտեսական փոփոխությունների ֆոնին առավել ռիսկային կուտակային մոդելի անցման առաջարկությունը առանց անորոշության և ներկայիս ռիսկերի վերլուծության թերի է: Բացի այդ, կյանքի ցիկլի մոդելին անցման կարևորագույն գործոններից մեկը կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների բաշխման և մասնակիցների տարիքի տարատեսակ վերլուծությունների միջոցով դուրս բերված հիմնավորումները պետք է լինեին, որոնք աշխատանքում բացակայում են:

10. Հեղինակի կողմից առաջարկվող վերջին՝ 9-րդ առաջարկությունը որևէ տնտեսական հիմնավորում չունի: Պարզ է, որ ողջ աշխարհում բանկային համակարգը վերափոխվում է և ֆինթեք ընկերությունները միաձուլվում են առևտրային բանկերին կամ փոխարինում վերջիններիս որոշ գործառույթներ: Սակայն պարզ չէ դրանց ՀՀ ֆինանսական շուկայում ադապտացիայի

դժվարությունները /թե ֆինանսական, թե կիրառական առումով, մասնագետների պակասով, տարատեսակ ռիսկերով պայմանավորված/, իսկ հեղինակը այստեղ ներկայացրել է միայն իր չհիմնավորված տեսակետը: Եզրակացությունների այս կետում ատենախոսը ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության բարձրացման տեսանկյունից կարևորում է նեռբանկերի և չելենջըր բանկերի դերակատարումը և առանձնացնում, որ դրանց ներդրումը կարող է երկրում բարձրացնել ֆինանսական ներգրավվածության մակարդակը: Նշյալի շրջանակում հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսական շուկայի ակտիվների զգալի մասն արդեն իսկ կենտրոնացված է բանկային համակարգում և նմանատիպ բանկերի ներդրման պարագայում առավել կմեծանա կախվածությունը բանկային համակարգից, ինչը տարբեր ասպեկտներով կարող է խոչընդոտել կենսաթոշակային ֆոնդերի՝ որպես առանձին ֆինանսական ինստիտուտների զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը: Լուսինե Սամվելի Համբարձումյանի՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» թեմայով** ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ կենսաթոշակային համակարգի բարելավմանը և կենսաթոշակային ֆոնդերի զարգացմանն ուղղված գործնական կարևոր խնդիրներ, վերլուծության արդյունքում տրված են նորովի լուծումներ: Միաժամանակ, վերջնարդյունքները պարունակում են գիտական նորույթ:

Լուսինե Սամվելի Համբարձումյանի՝ «Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական աշխատանք է:

Հեղինակի կողմից իրականացվել է վերլուծությունների վրա հիմնված գիտական հետազոտություն:

Աշխատանքի ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում են հետազոտության բովանդակությանը և արտացոլում են աշխատանքի դրույթներն ու արդյունքները: Սեղմագրում ներկայացված 6 (վեց) գիտական հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում:

Եզրակացնելով նշենք, որ Լուսինե Սամվելի Համբարձումյանի՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նա ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03՝ **«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ Տնտեսագիտության և Ֆինանսների ամբիոնի
դասախոս, տնտ.թ., դոցենտ՝ Ա. Մհերյան

ՀԵՀ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտ.թ., դոցենտ՝ Ն. Կիրակոսյան

Ստորագրությունները հաստատում եմ
ՀԵՀ գիտական քարտուղար՝ Վ. Թորոսյան
02 սեպտեմբերի 2022թ.